Արձանագրություն N 2

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բազկաթոռների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 Հունիսի 2021թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մարիանա Դուրգարյանը,
Անդամներ՝ Մագդա Կարապետյանը և Տիգրան Պետրոսյանը.
Քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյանը:

Օրակարգ

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20-Ք ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցման և տրամադրվող պարզաբանման մասին

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց տրամադրել ներքոնշյալ պարզաբանումը.

Հարցադրում N 1

Հնարավոր է մասնակցել եթե աթոռները մեկ ամբողջական նրբատաղտակից չեն, իսկ խաչուկները պլաստմասե է: Սակայն աթոռները ռուսական արտադրության են՝բարձր որակի և տրվում է 2 տարվա երաշխիք:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից,

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետը, հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Ընդունվել է որոշում՝
կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Դուրգարյան

գնահատող անդամներ՝ _____ Մ. Կարապետյան

_____ Տ. Պետրոսյան

քարտուղար՝ _____ Ա. Քոթանջյան